*Վերահաստատվել է*
*Տնօրինության 19.10.2016թ.-ի*
*թիվ 02/33/16 որոշմամբ*
*Տնօրինության նախագահ –*
*Գլխավոր տնօրեն*
*Արտակ Հանեսյան*_____

| Հ/հ | Անվանումը | Նշումներ |
|---|---|---|
| **ԳՊՖ հայտի ուսումնասիրման և որոշման կայացման համար անհրաժեշտ փաստաթղթեր** | | |
| 1. | ԳՊՖ դիմում-հայտ , որը ներառում է նաև ֆինանսավորման ծրագիրը* | |
| 2. | Ֆինանսավորման ենթակա գնման պատվերը հիմնավորող փաստաթուղթ (պայմանագիր, պատվեր, հայտ և այլն): | |
| 3. | Նախկինում նման պատվերների իրականացման փորձը հավաստող փաստաթղթեր (պայմանագրեր, հաշիվ ապրանքագրեր, կատարողական ակտեր և այլն): | |
| **ԳՊՖ տրամադրման վերբերյալ դրական որոշումից հետո վարկի ձևակերպման և պայմանագրի կնքման համար անհրաժեշտ փաստաթղթերի ցանկ** | | |
| 1. | Հաշվի բացման համար անհրաժեշտ փաստաթղթեր՝ այն դեպքում երբ հաճախորդը հաշվետեր չէ: | |
| 2. | Իրավաբանական անձի կանոնադրությամբ սահմանված դեպքում և կարգով իրավասու մարմնի (Բաժնետերերի/մասնակիցների/ հիմնադիրների ժողովի և/կամ խորհրդի) որոշումը՝ բանկից ֆինանսավորման և դրա ապահովման համար առաջարկվող ապահովման միջոցի (գրավ, երաշխավորություն և այլն) վերաբերյալ գործարքներ կնքելու մասին: | |
| 3. | Հարկային պետական ծառայությունից տեղեկանքներ պարտք ու պահանջի վերաբերյալ: | |
| 4. | Այլ բանկերում հաշիվների շարժը (նախորդ տարվա և ընթացիկ ժամանակաշրջանի համար)՝ բանկի քաղվածքի տեսքով: | |
| 5. | Կազմակերպության գործունեության հետ կապված պայմանագրեր՝ վարձակալության, բացառիկ ներկայացուցչական և այլն, (առկայության դեպքում): | |
| 6. | Ֆինանսական հաշվետվությունները՝ համաձայն ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության կողմից հաստատված ձևերի, վերջին հաշվետու ժամանակահատվածի համար՝ հաստատված հարկային տեսչության կողմից՝<br>• վերջին հաշվետու տարվա համար /հաշվեկշիռ և ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություններ ներկայացնողների համար/,<br>• վերջին հաշվետու եռամսյակի համար հաստատագրված և/կամ պարզեցված հարկ վճարողների համար: | |
| 7. | Տեղեկանք գրանցված բաժնետերերի/մասնակիցների/հիմնադիրների, տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ՝<br>• ՍՊԸ-ի դեպքում՝ տրված պետ. ռեգիստրի կողմից,<br>• բաժնետիրական և այլ կազմակերպահիրավական ձևի իրավաբանական անձի դեպքում՝ տրված պետական դեպոզիտարիայի կողմից, իսկ տնօրենի և կանոնադրության վերջին փոփոխությունների վերաբերյալ՝ տրված պետ. ռեգիստրի կողմից: | |
| **ԳՊՖ տրամադրման ընթացքում պահանջվող փաստաթղթեր** | | |
| 1. | Ֆինանսավորման ծրագրի համաձայն կատարվելիք ծախսերի ներքո մատակարարման պայմանագրեր, հայտ-պատվերներ, հաշիվ-ապրաքագրեր, պատվերը կատարելու նպատակով կատարվելիք ծախսերը հիմնավորող փաստաթղթեր: | |

* Եթե ԳՊՖ դիմում-հայտում դաշտերը բավարար չեն, տեղեկատվությունը կարող եք ներկայացնել առանձին տեղեկանքներով: